# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2339-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Կարգավիճակ | Առաջարկության բովանդակությունը | Կցված փաստաթղթեր | Եզրակացություն | Դրույթ |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Կարեն Աբրահամյան<br>20.10.2025 10:24:45 | | Հետվճարից օգտվող 348.000 անձանցից կոնկրետ քանիսն է թոշակառու,այդ թվի մեջ մտնում են նաև անապահովության նպաստ, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ, երրորդ և հաջորդ երեխայի (50.000) նպաստ և այլ շահառուներ ,ուստի 500.000-ից ավել թոշակառուների շատ փոքր տոկոսն է օգտվում ծրագրից,հետևաբար սա | | Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուների հետվճար տրամադրելու միջոցառումը նպատակ ունի նաև խթանելու կենսաթոշակառուների և սոցիալական խոցելի խմբերի կողմից ֆինանսական | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | դիտարկել կենսաթոշակների բարձրացում,կարծում եմ արդար չէ: | | ժամանակակից գործիքների և տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքները, մեծացնելու նշված գործիքների կիրառելիության տարածվածությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ այս առումով միջոցառումը ծառայել է իր նպատակին: Այսպես, միջոցառման մեկնարկից սկսած՝ 2022 թվականի հուլիս ամսին շահառուների թիվը կազմել է 16,903, իսկ 2025 թվականի հոկտեմբեր ամսին՝ մոտ 21 անգամ ավելի՝ 353,716: | |
| 2 | Կարեն | | Սույն որոշումն ուժի մեջ է | | Առաջարկը չի | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Աբրահամյան<br>20.10.2025<br>10:19:16 | | մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների (կատարած անկանխիկ վճարումների) վրա: Առաջարկում եմ սույն նախադասության մեջ կատարել փոփոխություն ու որոշումը տարածվի 2025 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների (կատարած անկանխիկ վճարումների) վրա, որպեսզի հունվարին ստացվող հետվճարը արդեն լինի ավելացված չափով,ձեր տարբերակով փետրվարին ստացվող հետվճարը կլինի ավելացված: | | ընդունվել: Նախագիծը մշակվել է բյուջետային ծախսերի ծրագարային մակարդակներին համապատասխան: | |
| 3 | Կարեն Աբրահամյան | | Առաջարկում եմ կոմունալ վճարումներից գոնե | | Առաջարկը չի ընդունվել: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 20.10.2025 10:19:16 | | որոշակի տոկոս հետվճար ձևավորել,օրինակ 10 տոկոս, վստահ եմ տեղյակ եք թոշակառուների բողոքն այս մասով, առջևում ջեռուցման շրջանն է, կոմունալ վճարումներից հետո գրեթե գումար չի մնում այլ գնումների համար, ինչպես կարող է 10000 դրամ ձևավորվի հետվճար,հասկանալի է ստվերի դեմ պայքարը,բայց կենսաթոշակառուների՞ միջոցով, ստվերի դեմ հարկայինը ,ՊԵԿ-ը պետք է պայքարի:Առաջարկս հարյուր հազարավոր մարդկանց անունից է: | | Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուների հետվճար տրամադրելու միջոցառման նպատակներից մեկը տնտեսության ստվերային շրջանառության կրճատմանը նպաստելն է: Այս տեսանկյունից կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներից հետվճար հաշվարկելը չի ծառայում միջոցառման՝ նշված նպատակի իրականացմանը: Ուստի նպատակահարմար է կոմունալ ծառայությունների | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | դիմաց վճարումներից հետվճար չհաշվարկել: | |